



DIocese OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate



Թի 1837
Յուլիս 7, 1994

Հոգեշնորհ
Տ. Նարեկ Արղ. Պերպերեան
Հովի Ս. Յակոբ Եկեղեցոյ
Ռիչմոնտ.

Սիրելի Հայր Նարեկ,

Ստացած ենք Յունիս 24, 1994 թուակիր ձեր նամակը, որով կարգ մը տեղեկութիւններ կու տայիք համայնքին մէջ ձեր կատարած աշխատանքներուն մասին:

Մեր գնահատանքը կը յայտնենք որ մօտ վեց ամսուան կարճ ժամանակամիջոցի մը ընթացքին ունեցած էք օգտակար գործունէութիւն եւ նախաձեռնած նոր յայտագիրներու:

Ուրախութեամբ տեղեկացանք որ ծրագրած էք շարունակել ձեր ուսումը: Անհրաժեշտ է որ գիտնանք թէ որքա՞ն ծախքի կը կարօտին ձեր դասընթացքները, որպէս զի ձեզի տեղեկացնենք թէ Առաջնորդարանը պիտի կարենա՞յ հոգալ ձեր ուսման ծախքը:

Կ'աղօթենք որ Տէրը Իր մշտական հովանիին ներքեւ պահէ ձեզ եւ յաջողութեամբ պսակէ ձեր աշխատանքներն ու ծրագիրները:

Սիրոյ ողջունի

Խաչագոյ Արք. Պարսամեան

ԽԱՇԱԿ ԱՐԶ. ՊԱՐՍԱՄԵԱՆ
Առաջնորդ